ԹՎԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

ՀԱՅԿՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ

20-րդ դարի երկրորդ կեսին տեղեկատվության ծավալն ու նշանակությունն ակնհայտորեն աճեցին: Գլոբալացումն առաջին պլան մղեց ուժի նոր գործոններ, բացառիկ դեր հատկացվեց տեղեկատվությանը, հաղորդակցությանը և տեղեկատվական տեխնոլոգիաներին: Ավելին, հասարակական կարծիքը այսօր ձևավորվում է տեղեկատվական ռեսուրսների միջոցով, որոնք տվյալների բազա, տեղեկատվություն ու տեղեկատվական հոսքեր պարունակող ենթակառուցվածքներ են:

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և որպես դրա հետևանք՝ համաշխարհային տեղեկատվական հասարակության ձևավորումն իրենց ազդեցությունն են թողել նաև պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Ներկայումս շատ պետություններ քաղաքականության բնագավառում լայնորեն կիրառում են թվային դիվանագիտության ծրագրեր:

Թվային դիվանագիտությունը պետական մարմինների կողմից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների՝ սոցիալական ցանցերի, բլոգների և նմանատիպ այլ մեդիա հարթակների կիրառումն է դիվանագիտական և քաղաքական խնդիրներ լուծելու համար[1]: Հաճախ որպես հոմանիշներ օգտագործվում են նաև «ինտերնետ-դիվանագիտություն», «սոցիալական ցանցերի դիվանագիտություն» և «վեբ 2.0. դիվանագիտություն» տերմինները:

Թվային դիվանագիտության հանդեպ ուշադրությունը հատկապես աճեց Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում զանգվածային բողոքի ալիքներից հետո, որոնք լրատվամիջոցներում ստացան «թվիթեր-հեղափոխություն» անվանումը:

2011 թ. գարնանը Թունիսում և Եգիպտոսում համացանցի ու շարժական միջոցների օգնությամբ երիտասարդական խմբերը զանգվածային բողոքներ ձեռնարկեցին: Ընդդիմությունը սոցցանցերն օգտագործեց համախոհներ հավաքագրելու համար, թեև հայտնի է, որ թվիթերի հաղորդագրությունների 70 %-ը IP հասցեներից էր, որոնք ստեղծվել էին արտասահմանյան սերվերների վրա: Սա վկայում է «արաբական գար-

[1] Տե՛ս **Цветкова Н**. Программы Web 2.0 в публичной дипломатии США // "США и Канада: Экономика, политика, культура", 2011, № 3, էջ 109-122:

նան» ժամանակ արտաքին տեղեկատվական միջամտության մասին, որի տեխնիկական հնարավորությունն ուներ միայն ԱՄՆ-ն:

Ի դեպ, արաբական երկրներում զանգվածային շարժումներից հետո Չինաստանում միջոցներ ձեռք առան՝ կանխելու ծավալած գործընթացները: Սա հաճախ անվանում են «Չինական մեծ վեբ-պատ»: Սրա էությունն այն է, որ արտաքին ազդեցություններից և չինական պետության ներսում անցանկալի տեղեկատվությունից պաշտպանվելու նպատակով համացանցում տեղադրվել է Firewall համակարգը, որը սահմանափակում է երկրի բնակիչների մուտքը խնդրահարույց արտասահմանյան ռեսուրսներ: Այլ կերպ ասած՝ երկրի ողջ տարածքում գործող համացանցային ռեսուրսները զտվում են[2]:

Կարևորելով թվային դիվանագիտության դերն ու ազդեցությունը համաշխարհային քաղաքականության վրա՝ այսօր շատ պետություններ ևս լայնորեն օգտագործում են դրա հնարավորությունները: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի և համագործակցության նախարարությունում ստեղծվել է թվային դիվանագիտության գրասենյակ[3], որն ակտիվորեն մասնակցում է արտաքին քաղաքական օրակարգի մշակմանը: Այստեղ նաև մեծ ուշադրություն են դարձնում տեղեկատվության լեզուներին, որի նպատակն է կապ հաստատել Բրիտանիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և աշխարհի տարբեր երկրներում գտնվող նույն լեզվով խոսող երիտասարդների միջև:

Ասիական շատ երկրներ ևս դիվանագիտության ավանդական ձևերին զուգորդում են թվային դիվանագիտությունը: Այսպես, ներկայումս Չինաստանում ակտիվորեն կիրառվում են աստրոտուրֆինգի տեխնոլոգիաներ: **Աստրոտուրֆինգ** եզրույթը շրջանառել են համացանցի օգտատերերը, դրա նպատակն է հատկապես համացանցում կեղծ հասարակական կարծիք ձևավորելը. հատուկ վարձակալված մարդիկ չնչին գումարի դիմաց բազմաթիվ ֆորումներում, ՁԼՄ-ների կայքերում և բլոգներում գրում են պատվիրված նամակներ՝ քաղաքական գործչին, քաղաքական խմբերին կամ կուսակցություններին տարբեր հարցերում ազգային աջակցության տպավորություն ստեղծելու համար[4]:

Հնդկաստանում ևս շատ գերատեսչություններ ունեն պաշտոնական կայքեր, սակայն դրանք հիմնականում տրամադրում են տեղեկատվություն հնդկական մշակույթի, արվեստի, խոհանոցի վերաբերյալ[5]:

---

[2] Տե՛ս **Swaine M. D**. Chinese Views on Cybersecurity in Foreign Relations Initiative (http:// carnegieendowment.org/email/South_Asia/img/CLM42MSnew.pdf (վերջին մուտքը՝ 25.07.2018թ.)):

[3] Տե՛ս «Foreign & Commonwealth Office 2016». “Digital Diplomacy. The FCO's digital work” // http://blogs.fco.gov.uk/digitaldiplomacy (վերջին մուտքը՝ 10.06.2018 թ.):

[4] Տե՛ս **Монбио Дж.** Необходимость защитить интернет от «астротурфинга» приобретает все большую актуальность // http://www.inosmi.ru/world/20110318/167458693.html, վերջին մուտքը՝ 14.01.2019 թ.:

[5] Տե՛ս **Алексеевна М. Э.** Цифровая дипломатия в странах Азии // http://politika.snauka. ru/2015/01/2289, վերջին մուտքը՝ 10.01.2019 թ. :

Հարավային Կորեայի կառավարությունը նպաստում է թվային դիվանագիտության բնագավառում հմուտ կադրերի պատրաստմանը: Դա է վկայում 2012 թ. կորեական կազմակերպությունների հետ կառավարության ստորագրած համաձայնագիրը՝ 500 ուսանողի կիբերդիվանագիտության հիմադրույթների ուսուցման վերաբերյալ:

Ճապոնիայում ևս կարևորվում են թվային դիվանագիտության ծրագրերը: Facebook-ում, Twitter-ում բացված ճապոնական էջերը հազարավոր համախոհներ ունեն, իսկ Youtube-ում տեղադրված հոլովակները բազմաթիվ դիտումներ են ապահովում[6]:

Ռուսաստանում թվային դիվանագիտության ավելի հեռանկարային ուղղություններից է տեխնոլոգիական բիզնեսի ընդգրկումը հրապարակային դիվանագիտության ոլորտի նախագծերում: Այս ուղղությամբ առաջին քայլերն արդեն արվել են. ստեղծվել է «Яндекс» ռուսալեզու որոնողական կայքը, «Вконтакте» սոցիալական կայքը, որը հայտնի է ոչ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանյան շատ երկրներում, ներառյալ՝ ԱՊՀ երկրներ, Իսրայել, Գերմանիա, ԱՄՆ: Ռուսաստանում ստեղծվել են նաև պետական պաշտոնյաների ու դիվանագետների ռուսալեզու և անգլալեզու բլոգներ, պետական մարմինների պորտալներում պարբերաբար հրապարակվում է նրանց գործունեությունը լուսաբանող տեղեկատվություն:

Հայաստանում ևս մեծապես կիրառվում են թվային դիվանագիտության ծրագրեր: Հարկ է նկատել, որ ըստ թվային դիվանագիտության 2016 թվականի դասակարգման (Digital Diplomacy-2016)՝ նախկին ԽՍՀՄ տարածաշրջանի երկրներում (չհաշված Մերձբալթյան երկրները) Հայաստանը զբաղեցնում էր երրորդ հորիզոնականը՝ Ռուսաստանից և Ուկրաինայից հետո: Նույն տարում Հայաստանը աշխարհում զբաղեցնում էր 52-րդ հորիզոնականը[7], իսկ 2017 թ. զգալիորեն բարելավեց իր դիրքերը՝ գրավելով 34-րդ հորիզոնականը[8]:

2016 թ. հայ-ադրբեջանական քառօրյա պատերազմն ապացուցեց, որ ներկայիս տեղեկատվական դարաշրջանում մեծապես կարևոր են տեղեկատվական տեխնոլոգիաները: Պատերազմի օրերին հակառակորդի բացած սոցիալական ցանցերի բազմաթիվ կեղծ օգտահաշիվները միտված էին հայերից տեղեկատվություն ստանալու և ապատեղեկատվություն տրամադրելու նպատակին: Հենց այդ օրերին ավելի ակնառու դարձավ տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանցով ճիշտ աշխատելու կարևորությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը Հայաստանում հատկա-

---

[6] Տե՛ս նույն տեղը:

[7] Տե՛ս РосКомСвобода 2016. «Россия вошла в ТОП международного рейтинга Digital Diplomacy 2016» // https://rublacklist.net/17137 (վերջին մուտքը՝ 10.06.2018թ.):

[8] Տե՛ս «Армения в рейтинге Цифровой дипломатии опередила соседей по региону» // http: // newsarmenia.am/news/politics/armeniya-v-reytinge-tsifrovoy-diplomatii-operedila-sosedey-po-regionu- / (վերջին մուտքը՝ 10.09.2018 թ.):

պես աճեց 2018 թ. ապրիլյան իրադարձությունների ժամանակ: Զանգվածային բողոքների հիմնական պատճառը երկրում կոռուպցիայի բարձր մակարդակն էր, սոցիալական անհավասարությունը, գործազրկության, արտագաղթի աճը: Այս ամենին գումարվեց Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսյանի վարչապետ դառնալը:

Հեղափոխությունը սկսվեց 2018 թ. մարտի 31-ին, երբ ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը իր մի քանի տասնյակ համախոհների հետ Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրիից քայլերթով շարժվեց Երևան, որտեղ ապրիլի 13-ին հարյուրավոր համախոհներ միացան շարժմանը:

Թավշյա հեղափոխությունն աննախադեպ էր իր ծավալով, ապակենտրոն բողոքի ակցիաներով: Կարճ ժամանակահատվածում այդքան համախոհներ ձեռք բերելը և բողոքի խաղաղ ակցիաներ անցկացնելը նախևառաջ արդյունք էին ճիշտ կազմակերպված միջոցառումների, որոնցում իրենց հատուկ տեղն ունեին հաղորդակցության միջոցները: Այսպես, բազմաթիվ հետաքրքրաշարժ թռուցիկներ, տեսահոլովակներ և այլ քարոզչական նյութեր ստեղծվում և տարածվում էին հենց սոցիալական հարթակներում: Բազմաթիվ բողոքի ակցիաներ, օրինակ՝ գիշերային շերեփազարկերը, ուղղորդվում էին ֆեյսբուքյան event-ների և «Տելեգրամում» դրված կոչերի միջոցով:

Հարկ է առանձնացնել հատկապես «Ֆեյսբուքն» ու «Յութուբը», որոնք ավելի շատ օգտագործվում էին ուղիղ եթերներ հեռարձակելու համար: Ինչպես նկատում է տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը, ուղիղ եթերներն ամենամեծ դերը խաղացին հեղափոխության հաջողության հարցում:

- Երբ դրանք իրականացնում էին հենց քաղաքական գործիչները, հատկապես Փաշինյանը, ստեղծվում էր խիստ անմիջական մթնոլորտ:
- Ուղիղ եթերները խափանեցին բազմաթիվ միջնորդ ինստիտուտների աշխատանքները, հեղափոխական թիմի հայտարարությունները հասնում էին հանրությանը առանց խմբագրական միջամտությունների, պալատական քաղաքագետների մեկնաբանությունների:
- Ուղիղ եթերները հնարավորություն ընձեռեցին նվազագույնի հասցնելու կեղծ լուրերի տարածումը, քանի որ անմիջապես հերքելու հնարավորություն կար:
- Ուղիղ եթերները դարձան ուղիղ կառավարման միջոց, քանի որ բողոքի ակցիաները տեղի էին ունենում իրարից ֆիզիկապես կտրված տարածքներում:
- Դրանք դարձան ներգրավման միջոց. Սփյուռքը նույնպես արձագանքեց՝ դառնալով իրադարձությունների ոչ միայն ականատես, այլև մասնակից[9]:

Իշխանափոխության օրերին բավականին ակտիվ էր նաև «Ինստա-

[9] Տե՛ս **Ս. Մարտիրոսյան**, Սոցցանցերն ու Հայաստանի թավշյա հեղափոխությունը՝ սիրո պատմություն (http://theanalyticon.com/?p=10669, վերջին մուտքը՝ 04.11.2018 թ.):

գրամը», որտեղ տարածվում էին բազմաթիվ մեմեր, քաղաքական ակտիվիստների հետ նկարներ: Արտաքին լսարանին տեղեկատվություն տրամադրելու համար լայնորեն կիրառվում էր «Թվիթերը», որտեղ Հայաստանցի ակտիվ օգտատերերը կատարում էին անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն մեծ քանակի գրառումներ: ՀՀ-ում որպես սոցիալական նոր հարթակ կիրառվեց «Տելեգրամ» մեսենջերը, որը թույլ էր տալիս նույնիսկ թույլ ինտերնետ կապի դեպքում ստանալ թարմ տեղեկատվություն:

Թվային դիվանագիտության կիրառումը մեծապես շարունակվեց նաև հեղափոխությունից հետո: Օրինակ՝ Նիկոլ Փաշինյանը ուղիղ եթերում ֆեյսբուքյան օգտատերերին ցույց տվեց իր առանձնատունը: Առաջին անգամ Հայաստանի պատմության մեջ քաղաքացիները տեսան, թե ինչպես են ապրում երկրի առաջին դեմքերը:

Այսպիսով, ի տարբերություն ավանդական դիվանագիտության, որի հիմքում բանակցություններն էին, ստորագրված պայմանագրերը, թվային դիվանագիտության հիմքում ոչ պաշտոնական գործողություններն են, որոնք նպատակ ունեն ավելի սերտ կապ հաստատել երկրի կառավարության ու բնակչության միջև:

Թվային դիվանագիտության շնորհիվ հնարավորություն է ընձեռվում ուղիղ կապ հաստատելու և հատուկ հաղորդակցություններ ուղարկելու անմիջապես թիրախային լսարանին, ինչպես նաև համագործակցելու կարծիք ձևավորողների հետ, ինչը ժամանակակից դիվանագիտությունը ավելի հրապարակային է դարձնում: Բացի այդ, թվային դիվանագիտությունը հատկապես արդյունավետ է արտասահմանյան լսարանի հետ աշխատելու ժամանակ, երբ անհրաժեշտ է ձևավորել պետության դրական իմիջը կամ ներկայացնել պաշտոնական դիրքորոշումը: Թվային դիվանագիտությունը կոչված է արագորեն տրամադրելու համապատասխան տեղեկատվություն, հերքելու կեղծ տեղեկությունները, հաստատելու պաշտոնական հաղորդագրությունները: Ընդ որում, թվային դիվանագիտությունը՝ որպես համացանցով այլ պետությունների բնակչության վրա ազդեցության միջոց, հիմնականում ուղղված է երկու թիրախային խմբերի՝ ակտիվ երիտասարդությանը և հասարակության ընդդիմադիր խավին՝ լրագրողներ, իրավապաշտպաններ և այլն:

Չնայած թվային դիվանագիտության ընձեռած օբյեկտիվ հնարավորություններին՝ գործնականում դրա զարգացման հարցերը հաճախ դիտարկվում են ռիսկերի ու սպառնալիքների համատեքստում: Սա պայմանավորված է նրանով, որ համացանցը բավականին էժան ու հեշտ հասանելի ռեսուրս է՝ ազդելու համաշխարհային հասարակական կարծիքի վրա: Բացի այդ, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ ի հայտ են գալիս նոր, ոչ ռազմական սպառնալիքներ, ինչպիսիք են կիբերհանցագործությունները և կիբերահաբեկչությունները, որոնց պետք է ուշադրություն դարձնել

ընդհանուր տեղեկատվական անվտանգության համատեքստում:

Համացանցը հաճախ դիտվում է որպես ուրիշի գաղափարախոսության և արտաքին քաղաքականության զովազդ, որպես տեղեկատվական պատերազմներ վարելու միջոց: Բացի այդ, հաքերությունը ևս այն սպառնալիքներից է, որը ի հայտ է եկել համացանցի հետ միաժամանակ: Ուստի ժամանակակից պետությունների համար տեղեկատվական անվտանգության ապահովումը դառնում է ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչ: Միաժամանակ, անհրաժեշտ է տարանջատել թվային դիվանագիտությունը գերտերությունների և փոքր պետությունների համար: Առաջին դեպքում այն ունի հարձակողական բնույթ, ընդհանուր արտաքին քաղաքականության գործիքարանի տեղեկատվական բաղադրիչն է՝ ուղղված սեփական գործունեության համար դրական տեղեկատվական դաշտի ստեղծմանը: Այնինչ սահմանափակ ռեսուրսներ ունեցող փոքր պետությունների համար այն ավելի շատ պաշտպանական է և կարևորվում է տեղեկատվական անվտանգության սպառնալիքներին հակադարձելու նկատառումով, քանզի թվային ազդեցիկ և թիրախավորված դիվանագիտության մշակումն ու իրականացումը խիստ ռեսուրսատար են:

Բանալի բառեր - *թվային դիվանագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, թավշյա հեղափոխություն, տեղեկատվական անվտանգություն, սոցիալական ցանցեր*

АЙКУИ МКРТЧЯН – *Цифровая дипломатия и бархатная революция в РА.* – В настоящее время в Армении широко используются программы цифровой дипломатии, роль которых особенно возросла во время апрельских событий 2018 года. Социальные сети стали основной платформой для координации акций протеста.

Несмотря на объективные возможности цифровой дипломатии, практические аспекты её развития часто рассматриваются в контексте рисков и угроз. Поэтому информационная безопасность Армении становится важным элементом её национальной безопасности.

Ключевые слова: *цифровая дипломатия, информационные технологии, бархатная революция, информационная безопасность, социальные сети*

HAYKUHI MKRTCHYAN – *Digital Diplomacy and the Velvet Revolution in RA.* – Currently, digital diplomacy programs are widely used in Armenia, the role of which has especially increased in our country in 2018 during the April events. Social networks became the main platform to coordinate protest actions.

Despite the objective capabilities of digital diplomacy, practical aspects of its development are often viewed in the context of risks and threats. Therefore, ensuring information security for Armenia becomes an essential element of national security.

Key words: *digital diplomacy, information technologies, velvet revolution, information security, information security, social networks*

Ներկայացվել է՝ 09.03.2019
Գրախոսվել է՝ 27.06.2019
Ընդունվել է տպագրության՝ 12.07.2019